# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4 փ, 4 շ., Հեռ.
(094) 248414 , geghadir.kotayq@mta.gov.am

N 224
*03 դեկտեմբեր 2018թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ,

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղղարկվում Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ղեկավարի 2018թվականի 47-Ա,48-Ա,49-Ա,50-Ա և 51-Ա որոշումները

Առդիր 5 թերթ:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ե. Մոտոյան*
*Հեռ 096161060*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2018թվականի N 47-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Համայնքային ծառայության մասին>>օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N15-Ն հրամանի հավելվածով՝ որոշում եմ.

1.2018 թվականի դեկտեմբերի 27-ին ժամը 11-ին նշանակել համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի հերթական ատեստավորում.
1) Կոտայքի մարզի Գեղադիր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, (ծածկագիր 1.2-1) -Մուդոյան Թամար Արամի:
2)Սահմանել,որ Թամար Մուդոյանը ենթակա է փաստաթղթային ատեստավորման:
2.Ատեստացիայի ատեստավորման հանձնաժողովի տեխնիկական և նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Անահիտ Սարգսյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. նոյեմբերի 26
գ.Գեղադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

26 նոյեմբերի 2018թվականի N 48-Ա

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Գեղադիր համայնքի 2-րդ փողոցի 8-րդ տան բնակիչներ Սարգիս Սարգսյանի և Արևիկ Եղիազարյանի համայնքի ղեկավարին ֆինանսական օգնություն ստանալու համար ներկայացրած դիմումները՝որոշում եմ.

1.Գեղադիր համայնքի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>>հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել համայնքի բնակիչներ՝
1)Սարգիս Պետրոսի Սարգսյանին 50 000/հիսուն հազար/ ՀՀ դրամ,
2)Արևիկ Արմենակի Եղիազարյանին 20 000/քսան հազար/ ՀՀ դրամ միանվագ օգնություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին վճարումն իրականացնել համայնքի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 հոդվածից՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 26
գ.Գեղադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 նոյեմբերի 2018թվականի N 49-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տաղական ինքնակառավարման մասին>>օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ որոշում եմ.

1. 2018թվականի նոյեմբերի 27-ին ժամը $11^{00}$-ին հրավիրել ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով՝

1)Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի դրույքաչափերը և արտոնությունները 2018թվականի համար սահմանելու մասին

2)Համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 26-ի N 52-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

20 18թ. նոյեմբերի 26
գ.Գեղադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2018թվականի N 50-Ա

### ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>>օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով,հիմք ընդունելով Գեղադիր համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 26-ի N 56-Ն որոշման 9-րդ կետը՝ որոշում եմ.

1.Գեղադիր համայնքի 2018թվականի բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.
01 բաժնի 06 խմբի 01 դասի 4241 հոդվածից 60 000/վաթսուն հազար/դրամ վերաբաշխել 01 բաժնի 06 խմբի 01դասի 4269 հոդվածին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ.նոյեմբերի 27
գ.Գեղադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 նոյեմբերի 2018թվականի N 51-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման,արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման,արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով,ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>օրենքի 16-րդ հոդվածի դ)ենթակետով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝ որոշում եմ.

1Հաստատել աղետների ռիսկի կառավարման պլանը համաձայն հավելվածի.
2.Աղետների ռիսկի կառավարման խորհրդին՝յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ը իրականացնել պլանի վերանայում:
3.Որոշման կատարաման հսկողությունը վերապահում եմ ինձ,
4.Որոշումը հայտարարել ըստ առնչության.
5.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

20 18թ. նոյեմբերի 27
գ.Գեղադիր